ԱԶԳ

[illegible]

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# Ռուբեն Միրզախանյան. Մոտակա ժամանակն առաջ կխաչի նոր ուժերի, որոնց կարիքն զգում է ժողովուրդը

[illegible]

[illegible]

ԱԶԳ

# միջազգային

ՀՈՒՆԱՍՏԱՆ

## Հույների մարդասիրական մոտեցումը գաղթականների նկատմամբ

[illegible]

«Inostraneq», 20 հունվար

[illegible]

## Նախկին Հարավսլավիայից օտար կազմավորումները դուրս բերելու կոչ

ՄՈՍԿՎԱ, 14 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ-ՆՈՎՈՍՏԻ. Նախկին Հարավսլավիայի հակամարտության լուծման միակ հնարավոր ուղին այն է, որ այդ երկրի ժողովուրդներին հանգիստ թողնեն եւ հնարավորություն տան ինքնուրույնաբար լուծելու իրենց խնդիրները: Այս կարծիքը հայտնեց Պետական դումայի աշխարհաքաղաքական հարցերի կոմիտեի նախագահ Վիկտոր Ուստինովը: Նա կտրուկ անհամաձայնություն հայտնեց բոսնիացի սերբերի դիրքերին ռմբահարվածներ հասցնելու ՆԱՏՕ-ի ծրագրերին: Կոմիտեի նախագահը չի բացառում, որ Պետդումայում փետրվարի 15-ին նախկին Հարավսլավիայի իրադրությանն առնչվող ունկնդրումների ժամանակ հարց առաջ քաշվի ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի կազմի մեջ մտնող ռուսական գումարտակի դուրսբերման մասին: «Նախկին Հարավսլավիայից հարկավոր է դուրս բերել բոլոր օտարերկրյա ռազմական կազմավորումները, ներառյալ խաղաղարար ուժերը», գտնում է Ուստինովը:

## 2001 թվականի աշխարհը որպես միասնական համակարգչային ցանց

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 14 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ-ՆՈՎՈՍՏԻ. Ամերիկյան խոշորագույն ընկերություններից մեկը՝ «Բել Ատլանտիկը» 7 միլիոն դոլլար է ներդրել այն գիտափորձում, որը հեռահաղորդակցական հեղափոխման դարաշրջանում պետք է ցույց տա, թե ինչպիսին կարող է դառնալ աշխարհը 2001 թ.: Վիրջինիայի նահանգի Բլեքսբըրգ քաղաքում (35000 բնակիչ) ընկերությունը դպրոցների, հիմնարկների եւ բնակելի համալիրների համակարգիչները կապել է «Բլեքսբըրգ էլեկտրոնիկ վիլիջ» միասնական ցանցով, դրանով քաղաքի բնակիչների համար անմիջական համակարգչային կապ ապահովելով ամբողջ աշխարհի հետ:

Բլեքսբըրգը գիտափորձի վայր ընտրվեց այն պատճառով, որ դրա բնակիչների կեսից ավելին արդեն անհատական համակարգիչ ուներ: Հիմա յուրաքանչյուր տնտեսուհի կարող է տնից կապվել որեւէ խանութի հետ, ընտրել անհրաժեշտ ապրանքը եւ պատվիրել դրա առաքումը: Քոլեջի ուսանողները կարող են հաղորդակցվել դասախոսների հետ, տեղեկություններ փոխանակել համակարգչի միջոցով:

## Կանադայում կարելի է օգտագործել սեփական դիմանկարով նամականիշեր

ՕՏՏԱՎԱ, 14 ՓԵՏՐՎԱՐ, ՌԻԱ-ՆՈՎՈՍՏԻ. Կանադան առաջին երկիրն է, որ քաղաքացիներին թույլատրել է օգտագործել սեփական դիմանկարով նամականիշեր: Երկրի փոստային ծառայությունը շրջանառության մեջ է դրել մաքուր դրոշմանիշերի հատուկ շարք, որոնց վրա կարելի է տպագրել ամեն տեսակ պատկերներ, այդ թվում սեփական լուսանկարներ, տարբեր նկարներ ու խորհրդանիշեր: Միակ պահանջն այն է, որ դրանք պետք է լինեն լավորակ եւ չխախտեն բարոյագիտական նորմերը: Այն անձինք, ովքեր բավարար երեւակայություն կամ անհրաժեշտ նյութեր չունեն ինքնատիպ նամականիշերի ստեղծման համար, կարող են օգտվել ազգային տոներին, ընտանեկան հանդիսություններին եւ մյուս իրադարձություններին նվիրված պատրաստի պատկերներից:

## Ծխելը ոսկրախտ է առաջացնում

Ավստրալիայի բժիշկների ուսումնասիրությունները պարզել են, որ ծխելը մեծապես ավելացնում է օստեոպորոզիս կոչվող հիվանդության հնարավորությունը հատկապես կանանց մեջ: Ուսումնասիրությունները հաստատել են նախկինում արված այն ենթադրությունները, որ ծխելը վատ է ազդում ոսկորների ներքին խտության եւ դիմադրողականության վրա, պատճառ դառնալով դրանց բարակացմանն ու դյուրաբեկությանը:

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի «Հրաչյա Աճառյան» համալսարանը եւ Գիտությունների միջազգային Արարատ ակադեմիան (Փարիզ) 1994-ի սեպտեմբերին կազմակերպում են հայ գիտնականների միջազգային գիտաժողով՝ նվիրված խոշորագույն լեզվաբան Հրաչյա Աճառյանի գիտական գործունեությանը:

Աճառյանական թեմաներով զեկուցումներից բացի գործելու են բանասիրության, պատմության, իրավագիտության, փիլիսոփայության, միջազգային հարաբերությունների, տնտեսագիտության, ժուռնալիստիկայի, աշխարհագրության, հոգեբանության եւ մանկավարժության սեկցիաներ, լսվելու են հաղորդումներ՝ հայ գիտնականների ձեռքբերումների ու գիտական արդյունքների մասին:

Գիտական զեկուցումները կտպագրվեն առանձին գրքով:

Խնդրվում է մինչեւ ապրիլի 30-ը Երեւանի «Հրաչյա Աճառյան» համալսարան ուղարկել զեկուցման կամ հաղորդման դրույթները՝ նշելով զեկուցողի հասցեն, աշխատանքի վայրը, պաշտոնը, գիտական աստիճանն ու կոչումը:

*Հասցեն՝ Երեւան-70, Ալեք Մանուկյան 13, հեռախոսներ 55. 24. 70, 55. 67. 90*

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը աշխատանքի է հրավիրում [illegible], որոնք տիրապետում են անգլերեն լեզվին (գրել-կարդալ):

Ցանկացողները դիմումները պետք է ներկայացնեն մինչեւ փետրվարի 25-ը, դեսպանատան ընդունարանում, 1-ին հարկ:

digitised by A.R.A.R.@

